ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

(1858-1935)

ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Ալեքսանդրի տատը՝ *Ծաղիկը*, հայտնի էր քաջությամբ: «Նա բարձրահասակ էր, հաղթանդամ, թիկնավետ, ինչպես մի ըմբիշ»,– *«Կյանքի բովից»* հուշագրության մեջ նրան այսպես է բնորոշում Շիրվանզադեն և այդ առիթով պատմում մի հետաքրքրական դեպք.

«Նրա կողքի վերքն ուներ իր պատմությունը: Մի գիշեր լեզգի ավազակները հարձակվում են նրա աղջկա տան վրա՝ կողոպտելու նպատակով: Այդ գիշեր պատահաբար տատս իր աղջկա մոտ է լինում: Ամառվա շոգի պատճառով նրանք քնած են լինում պատշգամբում: Աղմուկից զարթնելով՝ տատս աներկյուղ դիմադրում է ավազակներին: Նրանցից երեքին մեկը մյուսի ետևից բռնում է և պատշգամբից վար գցում: Չորրորդը կարողանում է դաշույնով վիրավորել նրան և փախչել: Այդ դեպքից հետո ազգաբնակչությունը հերոսացնում է տատիս՝ նրան անվանելով «ղաչաղների (ավազակների) հոգեհան»:

Յուրօրինակ «հերոսուհի» էր նաև մայրական տատը, բայց, այսպես կոչ-ված, «մշակութային հերոսուհի». նրա երեք դուստրերը՝ Օվսաննան, Սոնան և Մարիամը, հայ ժողովրդին պարգևել են տաղանդաշատ երեք որդիներ՝ գրողներ *Շիրվանզադեին*, *Կոստան Զարյանին* ու դերասան *Հովհաննես Աբելյանին*: Ի դեպ, հայ նշանավոր պատմաբան, գրող և գրականագետ *Լեոն* (Առաքել Բաբախանյան) նրանց արժանավոր զարմիկն էր: Անկասկած է, որ Ալեքսանդրը, ինչպես մեր բազմաթիվ գրողներ, իր ձիրքը ժառանգել է մայրական կողմից:

Բարի և զգայուն երեխան առհասարակ ուշադիր էր շրջապատի նկատ-մամբ: Փոքրիկին խոր անհանգստություն էր պատճառում, ասենք, գարնանն իրենց բակի հինգ թթենիների վիճակը: Գարնանը, երբ դրանց «անմեղ պտուղները դեռ հազիվ էին զարդարել կանաչ ճյուղերը», արդեն սկսվում էր թաղի երեխաների գրոհը: Չարաճճիները, քարերով ու փայտերով զինված, հարձակվում էին ծառերի վրա, ճղակոտոր անում և բնավ ուշադրություն չէին դարձնում նրա խնդրանքին. «Տղե՛րք, որքան ուզում եք, կերե՛ք թութը, բայց ծառերին մի՛ չարչարեք: Մեղք է»: Իր զգացողություններով Ալեքսանդրը խստորեն տարբերվում էր մյուս երեխաներից: Նա շատ էր սիրում նաև կենդանիներ՝ ձի, կով, հորթ, շուն, բայց ավելի շատ՝ գառնուկ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԳԱՌՆՈՒԿԸ

Ալեքսանդրի խնդրանքով հայրը Զատիկ տոնի առթիվ մի սև գառնուկ է գնում՝ գեղեցիկ, սիրուն դնչիկով, փոքրիկ եղջյուրներով, որոնք տղան ամեն օր փայլեցնում էր հավի ճարպով: «Ես այնքան սիրեցի այդ գառնուկը, որ գիշերներն անգամ չէի ուզում բաժանվել նրանից: Ամեն օր տանում էի քաղաքից դուրս՝ արածեցնելու: Նրա անունը դրել էի Լեյլի: Նա վազում էր ետևիցս՝ ուրախ-ուրախ թռչկոտելով: Լիզում էր ձեռներս, դնում էր դունչը ծնկներիս վրա և հետո խոշոր, գեղեցիկ աչքերը հառում երեսիս»: Երեխան նրան ընկալում է որպես ընկեր, հարազատ և վեց ամիս գուրգուրելով՝ մեծացնում է: Սակայն գառնուկի գլխին սև ամպեր են կուտակվում: Ալեք-սանդրն «օդի մեջ զգում է սարսափելի վտանգ». ծնողներն ամեն երեկո ինչ-որ բան էին քչփչում, իսկ մայրը ցածր ձայնով ասում էր. «Չեմ կարող ուտել նրա միսը, մեղք է»: «Կասկած չկար,- հիշում է Շիրվանզադեն,- որ խոսքը գառնուկիս մասին էր: Հայրս ուզում էր մորթել նրան, մայրս չէր թողնում»: Երեխան հորն աղերսում է, որ խնայի գառնուկին, բայց նա մնում է ան-դրդվելի: Ալեքսանդրն ապրում է հոգեկան ծանր դրամա: «Ինձ համար սկսվե-

ցին դառն, վշտալի օրեր,– գրում է նա:– Ես խելագարի պես էի. չգիտեի՝ ինչ անեմ, ինչպես մոռանամ մորթված բարեկամիս: Ամեն անգամ, երբ հիշում էի նրան, արտասուքը խեղդում էր ինձ: Իսկ ես նրան հիշում էի ամեն ժամ, ամեն վայրկյան: Հաճախ երազումս անգամ հալածում էր ինձ բարեկամիս ուրվականը... Օ՜հ, սիրելի՛ մանուկներ, երբեք–երբեք գառնուկ չպահեք, եթե գիտեք, որ մի օր պիտի մորթեն նրան»:

Այս տխուր պատմության հիշողությունն ամբողջ կյանքի ընթացքում ուղեկցել է զգայուն վիպասանին:

Մանկապատանեկան տարիների տպավորությունները հետագայում իրենց գեղարվեստական անդրադարձներն են ստանում Շիրվանզադեի ստեղծագործության մեջ, դառնում բոլոր ժամանակների համար արդիական և այսօր էլ հուզում են մեզ:

ՁՎԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդրը միամիտ էր և շատ դյուրահավատ: Երբ վարժապետը դասը վատ պատրաստելու համար մի անգամ բարկանում է նրա վրա և բացելով դասագիրքը՝ ցույց է տալիս առաջադրանքի տեղն ու հանձնարարում վաղը «ջուր արած», այսինքն՝ անգիր սերտած ներկայանալ, երեխան ուղղակի իմաստով է հասկանում ուսուցչի ասածը: «Մեր փողոցից ոչ հեռու կար մի աղբյուր: Մյուս օրը դասագիրքս տարա, պահեցի նրա տակ այնքան, որ բոլորովին ջուր դարձավ»,– հիշում է Շիրվանզադեն: Ուսուցիչը պատժում է երեխային՝ նրա ձեռքերի ափերին իջեցնելով քանոնի հարվածներ. «Լավ էր, որ քանոնի տափակ կողմովն էր զարկում և ոչ սուր կողմով: Այնուամենայնիվ, ձեռքերս սաստիկ ցավեցին: Ես լաց եղա:

– Անիրա՛վ,– ասաց Սարգիս վարժապետը,– ես քեզ երեկ ասացի, որ դասդ ջուր անես, այսինքն՝ անգիր անես ջրի պես, իսկ դու տարել ես, գիրքդ թրջել ու բերե՞լ: Դե՛ լավ, քի՛չ տըզա. դու դասագիրքդ ես ջուր արել, ես էլ քո աչքերը ջուր արի»:

ՇԻՐՎԱՆՁԱՂԵ «ԱՐՏԻՍՏԸ»

«Արտիստը» պատմվածքը մտավորականության թեմային առնչվում է յուրովի: Այստեղ հեղինակին հուզել են *միջավայրի և կերպարի հակադրամիասնական ճշմարիտ ընկալումն ու ընդհանրացումը*:

Պատմվածքը գրված է առաջին դեմքով, և հեղինակը հանդես է գալիս իբրև իրական անձ, դեպքերի ականատես և նույնիսկ մասնակից, ինչը երևում է պատմվածքի հենց սկզբից:

Պատմվածքի վերնագիրը դառնում է գլխավոր հերոսի՝ Լևոնի մարդկային տեսակի, խառնվածքի, բնավորության բնութագրիչը: Լևոնը զգայուն, արժանապատվության բարձր զգացումով, արվեստն ու երաժշտությունն ամբողջ էությամբ ընկալող, մաքուր ներաշխարհով, անմիջական ու պարզ պատանի էր, որ հանգիստ կարող էր ծափի իր մեկ զարկով մասնակից դարձնել դահլիճին՝ ճանաչում բերելով որևէ երգչի կամ երգչուհու:

Հերոսը, ապրելով նյութական ծանր պայմաններում, միշտ պահպանում էր իր արտիստիկ էությունն ու բարձր արժանապատվությունը՝ ամենից հաճախ չհանդուրժելով իր հանդեպ խղճահարության դրսևորումները:

Լևոնը սիրահարված էր Լուիզային, որը միշտ ուշադիր էր պատանու նկատմամբ: Մոտ լինելով երաժշտական աշխարհին և ցանկանալով երգչուհի դառնալ՝ Լուիզան մեկնում է Իտալիա: Լևոնն ամեն ինչ անում է, որպեսզի հասնի իր սիրելիին, իր վաստակած գումարը կորցնելուց հետո անգամ նա նորից ուժ է գտնում՝ շարունակելու այդ աշխատանքը, քանի որ վստահ էր, որ Լուիզան սիրում է իրեն: Բայց անսպասելի մի հարված վերջ է դնում ամեն ինչին. լուր է ստացվում, որ Լուիզան ու Կավալլարոն ամուսնացել են, և Լևոնը, չդիմանալով սիրո կորստի հարվածին, ինքնասպան է լինում՝ նետվելով այն նավի տակ, որով երազում էր գնալ Իտալիա:

Դիպաշար (սյուժե). դիպաշարի բաղկացուցիչ տարրերը

Գրական ստեղծագործության մեջ պատկերվող դեպքերի, գործողությունների ընթացքն ու զարգացումը կոչվում է ***դիպաշար*** (սյուժե): Այստեղ ներկայացվում են կերպարների արարքները, այլ անձանց հետ ունեցած հարաբերությունները: Դիպաշարի հիմքում միշտ դրված է որևէ բախում, անձնական կամ հասարակական պայքար, որը կոչվում է ***կոնֆլիկտ***: Դրա միջոցով զարգանում և ծավալվում է դիպաշարը, որն ունենում է

տրամաբանական զարգացում և ավարտ:

Մեծածավալ արձակ երկերում (օրինակ՝ վեպերում կամ վիպակներում) առկա են դիպաշարի հետևյալ բաղկացուցիչ տարրերը.

Նախադրություն. այստեղ գրողը ներկայացնում է այն միջավայրը, որտեղ տեղի են ունենում գործողությունները, նաև հերոսների անցյալից որոշ դրվագներ:

Հանգույց. այսպես է կոչվում դիպաշարի առանցքը, որի շուրջ ծավալվում են գործողությունները:

Գործողության զարգացում. սա դիպաշարի զարգացման ընթացքն է, կարելի է ասել՝ ամենածավալուն հատվածը, որտեղ ներկայացվում են բուն գործողություններն ու բախումները:

Գագաթնակետ. գործողության զարգացումը հանգեցնում է ամենալարված կետին, որտեղ բացահայտվում են որոշակի լուծում պահանջող շատ խնդիրներ:

Լուծում. այստեղ գործողությունը հասնում է իր հանգուցալուծմանը, որը գրողը սովորաբար ներկայացնում է ստեղծագործության ավարտին:

Մի շարք երկերում գրողը միտումնավոր խախտում է այս տարրերի դասավորությունը, իսկ փոքրածավալ ստեղծագործություններում (պատմվածք, նորավեպ) սրանցից մեկ-երկուսը կարող են չլինել:

Կան երկեր, որոնք չունեն դիպաշար. այդպիսին են քնարական բանաստեղծությունները, որոնց մեջ մարդկային կերպարը բնութագրվում է ոչ թե գործողությունների, այլ իր ապրումների, աշխարհից ստացած տպավորությունների միջոցով: